ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Արարատ, 060-88-55-55, ararat.municipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 օգոստոսի 2026 թվականի N 0792-Ա

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 30 ՀՈՒՆԻՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 0653-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Նորմատիվ իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արարատ համայնքի 30.06.2026թ. թիվ 0653-Ա որոշման նախաբանում « Արարատ համայնքի սեփականություն հանդիսացող » բառակապակցությունը փոխարինել «Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող» բառակապակցությունով:

2. Որոշման 1-ին կետում « Արարատ համայնքի » թվով երկու բառակապակցությունները փոխարինել « Հայաստանի Հանրապետության » բառակապակցություններով և որոշման առաջին կետը կարդալ հետևյալ խմբագրությամբ՝ « 1.Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող, Արարատ համայնք, գյուղ Վարդաշատ բնակավայրում գտնվող, 0.16400 հա մակերեսով հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 528.5 քմ մակերեսով դպրոցի և 22.5 քմ մակերեսով կաթսայատան նկատմամբ ճանաչել Արարատ համայնքի սեփականության իրավունքը:» :

3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

11 օգոստոսի 2026 թ.
ք. Արարատ